

## ՖԼՍԵՐ ԵԻ ՍՊԼՈՒԽ ՈՒԹ Ի Ի Ն Ն Ե Բ

**Հարսնախօսութիւն եւ նշանդրէք**

Հարսանիքները, կամ, ինչպէս ինքեանք նախիջևանցիք առում են, «հարսնիքները», ինչպէս ամեն տեղ, նախիջևանում էլ սկսուում են աշնանը և շարունակուում են մինչև Մեծ-պատր, երբ գիւղացիք վերջացնում են իւրեանց դաշտալին աշխատանքները, իսկ քաղաքացիք վերադառնում են ամսուանոցներից և սկսում են իւրեանց կեանքի աշնան և ձմեռուան սեղօնները:

Հարսնախօսութիւնը սովորաբար լինում է կամ տղայի ու աղջկայ ազգականների ձեռքով, կամ քահանաների միջնորդութեամբ և կամ առանձին հարսնախօսների ձեռքով, որոնք կոչւում են «Թիբոնչի»: Աղջիկ հաւանելու ու ուղելու գործում, բացի աղջկայ տեսքից ու գեղեցկութիւնից, մեծ դեր է խաղում և աղջկայ վերալ եղած փողն ու բաժինքը, կամ, ինչպէս ասում են, «ջըհէզը»:

Նախիջևանում կապուած պսակները մեծաւ մասամբ հաշուի ու գործնական դիտումների արդիւնք են: Ամուսնութեամբ ինտելլիգենտ մարդիկ կեանքի ապահովութիւն են ձեռք բերում, վաճառականներն իւրեանց մայր գումարներն են մեծացնում և իւրեանց առևտրական գործերն ընդարձակուում, գործակատարները գուրս են գալիս իւրեանց բաղաներին ու «չորսպաջինների» մօտից և իւրեանց սեփական գործը սկսում, և այն և այն: Հաշուի ամուսնութիւնները, ի հարկէ, աւելի յաճախ տեղի են ունենում քաղաքացիների մէջ, քան թէ գիւղացիների, որոնք բնականապէս աւելի են պահպանել իւրեանց նախապետականութիւնը: «Հէլալ կաթնակէր» և «Յջախի որդի», խօսքերը որոնց մինչև ցալսօր քիչ-շատ դեռ գին են տալիս գիւղացիք, քաղաքացւոց բերանում արդէն կորցրել են իւրեանց խորհուրդը և նշանակութիւնը: Քաղաքում ոչ մի բանի չեն նայում, մինչև իսկ տեսքն ու գեղեցկութիւնը, «բնութքն» ու «մեծարիֆէթը», զիտութիւնն ու կրթութիւնը բանի տեղ չեն դնում:

«Կարգուել» ցանկացող քաղաքացի երիտասարդը, երբ «խնամի է ուղարկում» նախապէս և տիրապէս պատուիրում է իմանալ, թէ աղջկայ տէրը որքան փող պէտք է տալ աղջկայ վերալ, որքան «ջրհեղ» միտք ունի անելու։ Իւրեանց աղջիկներին „Հարս անել” ցանկացողներն էլ իւրեանց հերթով նախապէս աշխատում են իմանալ, թէ փիսացուն ինչ կարողութեան տէր է։ Դիւղացիք տեսնում ու հաւանում են աղջիկներին եկեղեցիներում, հարսանիքներում ու հրաւէրներում կամ „զիաֆէթներում” և ուխտագնացութիւնների ժամանակ, մասնաւորապէս վարդավառին ու „խըտրելլեզին”, իսկ քաղաքացիք ամեն տեղ, որովհետև քաղաքի աղջիկները բոլորովին զգատ են և ամեն տեղ լինում են, ամեն տեղ զրօննում ու շրջում են երիտասարդների հետ։

Սիրահարութեամբ, սրտի միտումներով ու զդացմունքի հակումներով եղած ամուսնութիւնների ուսկաւութեամբ պէտքէ մեկնել և այն հանդամանքը, որ նախիջևանի զաղթականների մէջ համարեան թէ սիրահարական երգ չկալ և լիշողութիւն էլ չկալ, որ մի ժամանակ շատ եղած լինի։ Հաշիւր, կողմնակի դիտումները և կարբիները բանաստեղծութիւն չեն սիրում։ Իգեալների, դաղափարների և զդացմունքների աշխարհ չէ նախիջևանը. պլողան, կեանքի լուրջ ու կոշտ պլողան է այս կողմերի հայ գաղթականների մտքում թալաւորողը, սրտին տիրողը, իշխողը։ Մեզ յաջողեց զրի անցնել „Արդու և խամբեր” վերնագիր կրող երգը, որ Ղրիմից բերուած լինելով, մինչև ցալոր գեռ պահպանուել է զիւղացիների հերանում, և որ սիրահարական երդի բոլոր տարերքն է պարունակում իւր մլ յ. Այդ երդն այլ ևս կոչուում է „Ապօձանի երդ”։

### ԱՐՁՈՒ

1. Փարչս առի, ջուրի գնացի,  
Տալտրմիշ արի, վերուցի,  
Հոգիս, հաւատս, Խամբեր,  
Շալուճանս կորուցի.  
Հոգիս, հաւատս, Խամբեր,  
Շալուճանս կորուցի.

## ԽԸՄԲԵԲ.

2, Ես ասօր չորվախ գնացած չիմ,  
Զեռքս, երեսը լուացած չիմ.  
Աղու տասնէ, կը խըմիմ,  
Ես քու ապրճանդ տեսած չիմ.

## ԾՐՁՈՒ.

3, Աղու ուզենասնէ, աղու կ'լամ,  
Ինձի ուզենասնէ, ես կ'լամ.  
Բայց իմ ապրճանս ալ  
Ճերմակ ծոցիդ մէջը պէնկ է<sup>1)</sup>։

## ԽԸՄԲԵԲ.

4, Քաղաքը փորուած էր,  
Ճերմակ օշխարը խուզիով էր  
Ապրճանիդ վըրան  
Ի՞նչպէս դիր գրած էր.

## ԾՐՁՈՒ.

5, Քաղաքը փորուած էր,  
Ճերմակ օշխարը խուզիով էր.  
Ապրճանիս վըրան  
Անո նս ալ գրած էր։

## ԽԸՄԲԵԲ.

6, Ջուրը կերթար օլուխ, օլուխ<sup>2)</sup>։  
Կ'քաշէին թօլուխ, թօլուխ.  
Ապրճանդ գըտնողին  
Ի՞նչ պիտ տաս մուշտուկուխ.

## ԾՐՁՈՒ

7, Ջուրը կերթար օլուխ, օլուխ,  
Կ'քաշէին թօլուխ թօլուխ.  
Ապրճանս գըտնողին  
Արդուն կերթայ մուշտուկուխ։

<sup>1)</sup> Պէնկ—խար, <sup>2)</sup> Օլուխ օլուխ—դարիւ դարիւ,

## ԽԱՄԲԲԵՐ.

8. Յատեղը ինձի մեղք կանին,  
Կէնճ<sup>1)</sup> կղոյսս խըցմալամիշ կանին<sup>2)</sup>,  
Եղէր էրկուսս մէկ լանքնէ,  
Մեղի դընտան կըմգին.

## ԱՐՁՈՒ.

9. Տունին տիրէկը<sup>3)</sup> մարջան<sup>4)</sup> է,  
Հոգիիս սիրածը տուն իս.  
Եղէր էրկուսս մէկ զնտան ձգիննէ,  
Զնտանը մեղի առքայութին է:

## ԽԱՄԲԲԵՐ.

10. Բէկը իմիս տակիս է,  
Կտրած օրէնքին խացիլ իմ.  
Ըլէմ աշխրդին հետ չիմ փոխիլ,  
Մրգուն իմիս փս լըս է.

## ԱՐՁՈՒ.

11. Դետինին վրայէն չորս ձիաւոր կուգան,  
Զորսին մէկ հատը մուրատլը է.  
Ես կ'նանչնամ Խամբերին,  
Օրթացի դուռու<sup>5)</sup> ձիովը Խամբերն է:

## ԽԱՄԲԲԵՐ

12. Ինչ որ էղիլ է էղիլ է.  
Ճակատս սկը գրուիլ է.  
Ճակատս սկը գրուած էր,  
Խամբերին գուլում լզաւ.

Սիրահարական երգի տարերք է պարունակում իւր մէջ և  
Հետևեալ վեց տողը, որ Նախիջևանի պառաւներն սովորաբար  
ասում են, երբ որ տեսնում են մէկին նստած քունը տանելիս.

Քունն էկիլ է, աչքն առիլ է,  
Նարն էկիլ է, գուռը կայնիլ է.  
Ինչ գիտէ քի եարին էշթայ,

<sup>1)</sup> Կէնճ—երիտասարդ; <sup>2)</sup> Խըցմալամիշ անել—ջարդել, կոտորել; <sup>3)</sup> Տիրէկ—Սիւն, <sup>4)</sup> Մարջան—Բուստ, <sup>5)</sup> Դուռու—կարմիր.

Ինչ գիտէ քի քունին էշթայ,  
Քունն էշթայ-նը, մէմալ կուգայ,  
Նարն էշթայ-նը, մէմալ չի գայ<sup>1)</sup>)

Նախիջևանում հին ժամանակներն ապրելուս է եղել մի ժողովրդական երգիս Աղապալի անունով, որ ՚ի միջի ալլոց, մի քանի սիրահարական երգեր է ասել և տարածել ժողովրդի մէջ, բայց ներկայումս այդ երգերը համարեա թէ ամբողջովին մռացուել են: „Աղապալի”-ին է պատկանում յայտնի „Սամաւարի երգը”, որ քանիցս տպագրուած է. նորան է, գուցէ, պատկանում և „Երեք օրուան լուսնի նման ունքերդ” յայտնի երգը, որ իւր գեղեցկութեամբ Նախիջևանի ժողովրդական սիրահարական երգերի մէջ ամենաընտիրը կարող է համարուել:

Երբ որ երկու կողմերից էլ համաձայնութիւնը կայանում է, փեռացուն առնում՝ իւր հետ իւր ամենամօտ ազգականներին և գնալով աղջկայ տունը, „Խօսք” է անում, այսինքն համրուրում է „Բիաթայի” և „Բիանայի” – աներոջ և զաքանչի ձեռքերը, պաշտօնապէս փեսացու է յայտարարուում և շնորհաւորութիւն ընդունում: „Նշանտուք” խօսքը, որ Նախիջևանցիք գործ են ածում, արտայալուում է ոչ թէ ընդհանրապէս ամբողջ նշանադրութեան հանդէսը, այլ միայն նշան տալու կամ մատանի փոխելու պարզ գործողութիւնը, որ կատարուում է կամ նոյն խօսքի ժամանակ և կամ „Բէկին”: Ընդհանուր նըշանադրութեան գործողութիւնն արտայալու համար Նախիջևանցիք սովորաբար գործ են ածում տաճկական այդ „Բէկ” բառը, որ, ինչպէս յայտնի է, նշանակում է խոկապէս զրաւական, այսինքն այդ գէպքում հարօնացուն ներկայանում է ինչպէս „Բարի” կամ ապրանք, որ գնուած է, բայց տակաւին զինը ամբողջովին չի վճարուած, այլ միայն մի մասը: Փոխարերական մտքով, ՚ի հարկէ, „Բէկ” բառ կարող է նշանակել և նշանադրութիւն:

„Բէկը” կատարուում է „Խօսքից” մի քանի օր յետոյ աղջկայ տանը և շատ հանդիսաւոր կերպով, այնպէս որ շա-

1) Այս վեց տօղը հաղորդել է մեզ Տէր-Սահակ Զարքֆեանը:

տեղը, որոնք հանդիսաւոր „բէհ“ են կատարել, այլ ևս հանդիսաւոր հարսանիք չեն անում, որովհետև „բէհն“ էլ հարսանիքի պէս բան է և նոյն ծախսն ու „դառաթն“ է պահանջում։ Յաճախակի մեծ ծախսերից խոլս տալու համար „բէհն“ ու „խօսքը“ միացնում են ու խսկոյն սկսում են հարսանիքի պատրաստութիւն տեսնել։

Դիւղերում սովորաբար հաւանած աղջկալ տունը խնամի է դնում տղայի հայրը կամ մօտ ազգականը։ Հասնելով տուն և մտնելով բակը, նա անմիջապէս չէ մտնում, այլ նախապէս կանգնում է դրան առաջ և դուրս է կանչում աղջկալ հօրը և յարտնում է նորան իւր գալու պատճառը։ Եթէ խնամու առաջարկութիւնը հաճելի է լինում աղջկալ հօրը, նա խսկոյն և եթ ներս է հրաւիրում նորան, յարգում և «ջուղար» տալիս, այսինքն՝ նորա առաջարկութիւնն ընդունելու դէպքում տղայի հայրն արտասանում է „խօսքը մէկ Աստուած մէկ“ ասացուածքը, որով և ամրացնում է դործը, և անմիջապէս ընդհանուր համաձայնութեամբ որոշուում է „բէհն“ օրն ու տեսակը, որովհետև գիւղերում բէհը լինում է մեծ և փոքր։ Եթէ որոշուում է „փոքր բէհ“ անել, նշանակուած օրը տղայի ծնողները և ամենամօտ մարդիկ սահմանափակ թուով գնում են աղջկալ տունը, համեստ կերպով ուտում, խմում, ուրախութիւն են անում „նշանտօք“ կատարում, այսինքն մատանի են դնում աղջկալ մատը։ Խոկ եթէ որոշուում է „մեծ բէհ“ անելու, նշանակուած օրն աւելի մեծ թուով մարդիկ են գնում, հրաւէրք են անում, դար ու զուռնայ են կանչում և աւելի մեծ հանդիսով են կատարում „նշանտօքը“։ Երկար ժամանակ քէֆ, ուրախութիւն անելուց, կուշտ ու կուռ ուտել-խմելուց և պարելուց յետով, աղջկալ տանից բոլոր հրավիրեալները նոր խնամիների հետ գնում են տըղայի տունը „փեսատես“, որովհետև դեռ գիւղերում պահպանուել է փեսայի մինչև հարյանիքը աղջիկը շտեսնելու և աղջկալ տունը չգնալու սովորութիւնը։ Աղջկալ տանից փօխա-

դարձ՝ մատանին ուղարկուում է փեսալին և կամ նոյն խոլ բէհի օրը խնամիների ձեռքով, և կամ նշանադրութիւնից յետոյ պատահած մեծ տօներից մէկի ժամանակ — Ծննդեան, Ս. Սարգսին, Յարէկենդանին, Միջինքին, Խաղկազարդին, Զատկին, և միւս տօներին, երբ աղջկայ և տղայի տներից միմեանց փոխադարձաբար „տարուբեր“ է ուղարկուում։ Տարուբերը, կամ ինչպէս քաղաքացիք ասում են, „խրկուածքը“ բաղկացած է լինում անուշեղէնից՝ խաթմուլս և իվլիկ հալուաներից և զանազան ընծաներից խնամացող ընտանիքի կարողութեան համեմատ։ Ամեն մի „խրկուածք“ ունենում է իւր „տառցը“, այսինքն աղջկայ կողմիցն էլ փոխադարձաբար ուղարկում են անուշեղէն և ընծաներ փեսալի տունը։ Ահա այդ դարձերից մէկի հետ ուղարկում են և մատանի, որ հազցնում են փեսալի մատը իբրև փեսացուի նշան և իբրև փոխ նորա հարոին ուղարկած ու մատը հազցրած մատանիին։

Հին ժամանակները „նշանտուքի“ ժամանակ նշան օրհնելու և կէս պսակ կատարելու սովորութիւն է եղել, բայց նըշան յետ տալու, կամ, ինչպէս ասում են, „ետ լինելու“ գէպքերի յաճախելու պատճառով, կէս պսակ կատարելը այստեղ էլ ինչպէս ուրիշ տեղերում, արգելուել է հոգևոր իշխանութիւնից։

Մենք ասացինք, թէ քաղաքում բէհը մեծ „դառաթով“ է կատարուում և յաճախ աւելի ծանր է լինում, քան թէ հարսանիքը, ուստի և „դառաթով“ բէհ կատարողները շատ անգամ այլ ևս հանդիսաւոր հարսանիք չեն անում։ Դառաթա ասելով նախիջևանցիք հասկանում են ամեն մի այնպիսի հանդիսաւոր գործողութիւն կամ արարողութիւն, որի ամեն բանը տեղն է, ամեն բան շքեղ, թանգ և սարգին է, ամեն մանրամասնութիւն, ամեն ծէսք ու սէթևեթք ճշտիւ կատարուած, ճշտիւ պահպանուած է։ Եւ ճշմարիտ, բէհ կատարողը, որ սովորաբար լինում է աղջկայ տէրը, նախօրօք ուղարկում է իւր և իւր նոր խնամիների ազգականներին տպագրուած հրաւիրատումսակներ, վարձում է երաժշտութիւն, բռնում է հմուտ խոհարար և բազմաթիւ սպասաւորներ, պատրաստում է շքեղ խնջուք և նախընթրիք և ընթրիքի փարթամ մեղաններ թանգ-

նոց գի՞նիներով և մասնաւրապէս շամպանով և ազգի-ազգի սեթևեթքներով, և այլն և այլն Բէհի ամենահետաքրքրական և հանդիսաւոր բովէն լինում է խնամիների գալու ժամանակը:

Խնամիներն առհասարակ ուշ են գալիս, նազով-տուզով են գալիս, որովհետև այդ օրը նոցա պատիւը շատ մեծ է. այդ օրը նոքա „թոռէ պատն“ են նստում, այդ օրը նոքա անդադար յարգուում ու մեծարուում են, խնամի ջան, խնամի ջան, „խնամի-բան“, „խնամի ման“ քաղցր խօսքերն ասելով ու լսելով! Երբ որ ուշ, երեկոյեան 11 ժամին, իմացուում է որ խնամիները գալիս են, խակոյն բէհի տանը բոլորեքեան իրար գըլխով են կպչում, խակոյն ամենքն ընդառաջ են դուրս գալիս և վառած աշտանակները ու մոմակալները ձեռքերին բռնած, շարուում են զլխաւոր մուտքի դրան երկու կողմը, նշան տալով երաժշտութեան, որ խնամիների երեւալում պէս ընդառաջելու հանդիսաւոր „մարշն“ նուազեն: Դրկախառնութեան, համբոյների, „բարի սահաթի թլալ“, „բարի պսակ առնուն“ շնորհաւորանքի և ուրախ բացականչութիւնների ձայները խառնուելով երաժշտութեան նուազների հետ, մի խուզ, մի անորոշ, բայց քաղցր ժխոր են կազմում, որ, ըստ ամենայնի, համապատասխանում է շքեղ հանդիսին:

Բէհի ընորոշ առանձնայատկութիւնն է „նշանի խուրաբիան“, որ ուղարկուում է բէհի յաջորդ օրը տղայի տունը մեծ քանակութեամբ և տղայի տանից արդէն բաժանուում է փեսայի բոլոր ազգականներին: Նշանի խուրապիան զատուում է միւս բոլոր խուրապիանների տեսակից իւր կտորների խոշորութեամբ, իւր առանձին համով ու հոտով և զարդարանքով: Կտորները լինում են շատ խոշոր, որովհետև խիստ շատ է պահանջուում և բնականապէս հնարաւորութիւն և ժամանակ չի լինում, փոքր, նուրբ և պէս-պէս ձևերով կտորներ պատրաստելու, ինչպէս շինուում են սովորական խուրաբիանները: Խսկ համի, հոտի և զարդարանքի առանձնայատկութիւնն այն է, որ նշանի խուրապիայի մէջ խառնում են վարդի իւղ և երեսը զարդարում են ցոլուն սեթևեթքներով:

Հարսանիքից 15 օր առաջ զիւղերում տղալի տանից ուղարկուում է Հարսի տունը պսակի զգեստացուն՝ «Խումաշ» շրջաղղեստի համար և թանգնոց երեսացու «բուրնու»-ի համար։ «Խումաշ» ասելով, զիւղացիք հասկանում են ամեն մի մետաքսուէ կտոր, որից սովորաբար կարուում է Հարսի պսակի հանդերձը, իսկ «բուրնուն» կարճ քաթիպայի պէս վերնազգեստ է, որից երեսացուն աթլաս կամ թափիշ է, իսկ աստառը մաղեղին։ Քաղաքում նոյն «խրկուածքը», նախ, ուղարկում են «խինա-գեղասիի» օրը և, երկրորդ, աւելի հանդիսով են կատարում այդ պսակի զգեստացուն ուղարկելու ծէսը, քանթէ զիւղերում։ Քաղաքի զգեստեղէնի «խրկուածքը» բաղկացած է լինում պսակի ամբողջ շորից իւր բոլոր պարագաներով, ոկրսած քօղից, և վերջացրած կօշիկներով, որովհետև այնպիսի հասկացողութիւն կալ, որ Հարսն իբրև թագաւորի պատկանելիքը պէտք է տուն գույ տղալի պատրաստած զգեստներով։ Մինչև իսկ պսակի կերոններն էլ փեսան է ուղարկում «խրկուածքը» հետ։

*Խինա-գեղասի, հարս-բաղնիք եւ հարսանիք..*

Խինա-գեղասի տաճկական բառը, ինչպէս յալտնի է, նըշանակում է «չինալի-դիշեր», որովհետև այդ օրը, զիշերը կատարուում է Հարսի գլուխը հինայ դնելու հանդէսը։ Հարսի գլուխը հինա դնելը, որ այժմ քաղաքում իսպառ վերացել է և պահպանուել է միայն տեղ-տեղ զիւղերում, կատարուում է մեծ հանդիսով։ Պսակից երեք օր առաջ տղալի տանը պատրաստուում է մի ամառն հինայ և մի մատուցարանի վերայ դըրած մի կերոնի հետ ուղարկուում է Հարսի տունը, որտեղ այդ երեկոյ մեծ հրաւէրք է լինում և հաւաքուած են լինում բաղմաթիւ աղջիկներ Հարս ու փեսալի աղգականներից, Հարսի բարեկամուհիներից և ընկերուհիներից։ Աթոռի վերայ բարձ են դնում, Հարսնացուին նստեցնում են վերան սենեակի մէջ տեղը կամ անկիւնում, երաժիշտները նուագում են «Ալկէլին» եղանակը և հանդիսականները վառած կերոնը բռնած մէկ մէկ

պարում ու խաղացնում են հինան։ Կուշտ պարելուց և հինան խաղացնելուց յետով, կանալք սկսում են հինան դնել հարսի գլուխը, իսկ աղջիկները հինալից մի մի մատ առնում, քսում են իւրեանց ձեռքի ափին, որ փոխը, կամ, ինչպէս ասում են, «Տառօսը» իրենց էլ լինի։ Հին ժամանակները այդ դէքում հանդիսականները սովորութիւն են ունեցել մօտենալու հարսնացուին, մի մի մատ հինալ դնելու նորա գլուխը և երգելու «Ալկէլին» երգը, որից այժմ պահուել է հետևեալ կտորը.

1. Հինա տըրին, պաղնիք տարին,  
Զիլֆիւ մազըս փէրչամ արին,  
Կուլիսուս ալ փօշի կապեցին,  
Պերին քօշան կայնեցուցին.  
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի։
2. Փեսաս Տնողաց հէլալ օրթի,  
Կուլիսուն կտակը կապուտ մորթի.  
Մէքատիկ էր նա իր սօցին,  
Մեռնիյ անոր սէլի պօցին.  
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի։
3. Եփոր աչքս նորան տեսաւ,  
Երկու թուշէս ալ կաթեցաւ.  
Հարկի, մարկի, մընաք բարով,  
Աստուած մեղի պահէ սէրով.  
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի։
4. Թաքաւորըս կուքայ թուրով,  
Հալիսը շատ է, կառնու զօռով,  
Պաշխիշներով, յարկինքներով,  
Աստուած մեղի պահէ սէրով.  
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի։
5. Կերթաս մեղմէն ճանփատ տիւզ է,  
Կերածըդ չամիչ ու թուզ է,  
Ըշըդ կուլայ, սիրտըդ կուզէ,  
Մօրէդ պաժնըզիլ սիրտը չուզէ,  
Հարկը կասեն անպէս կուզէ.  
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի <sup>1)</sup>։

<sup>1)</sup> Այս երգը մի անգամ տպագրուել է „Խաչկանց Պատրիարքական Գովորա“-ում։

Քաղաքում, որտեղ, ինչպէս ասացինք, հինալ դնելու սովորութիւնն գլխովին վերացել է և պահուել է միայն «Խինա-գեղասի» անունը, այդ օրը, երեկոյեան ուղարկուում է Հարսի պասկի շորերը, մոմերը և կատարուում է ալիւր-մաղէքի հանդէսը և այդ առթիւ մեծ հրաւէրք է լինում. աղջկայ տանը: Հաւաքուում են առհասարակ Հարսի ընկերուհիները և ազգական աղջիկները, գալիս է և փեսան իւր մօտ ընկերներով: Մէջտեղ են հանուում փոքրիկ տաշտը և շրջանակն ուկեղոյն ու. արծաթագոյն թղթերով զարդարած մաղը և ալիւր են մաղում Հարսանքի Հացը պատրաստելու համար: Ալիւր մաղողները լինում են փեսան և երիտասարդները, որոնք մաղը մի քանի անգամ թափահարելուց յիտոյ, յանձնում են հերթով միմեանց և այդ առթիւ փող են նուիրում ալիւր-մաղէքի հանդէսը կատավարող ու դեկավարող «Քիգային»:

Խինա-գեղասիի յաջորդ օրը կատարուում է «Հարս-պաղնիքի» հանդէսը, որ քաղաքում արդէն վերացել է և մնացել է միայն գիւղերում: «Փեսալ-պաղնիքը» վերացած է թէ քաղաքում և թէ գիւղերում. դորանից մնացել է, այն էլ միայն գիւղերում, գէթ մի ծէս-«Փեսալ-թրաշ», որ կատարուում է շատ մասնաւոր ու սահմանափակ հանդիսով:

Հարս-բաղնիքը սովորաբար կատարուում է աղջկայ կամ կարգուած քրոջ տանը և կամ մօրատատի, կամ, ինչպէս ասում են, «մամուն» տանը, որտեղ այդ առթիւ «աղջիկ-ժողով-տանք» է լինում: Բաղնիքի հանդէսը կատարելուց և ամրող օրն ուրախանալուց յիտոյ, Հարսը շրջապատուած իւր ընկերուհիներով և երաժշտութեամբ վերադառնում է տուն: Հասնելով իւր բնակարանին և մտնելով բակը, ուրախ թափօրը կանգ է առնում տան դրան առաջ, որովհետև առանց աղջկայ մօր հանդիսաւոր կերպով հարսին ընդառաջ դուրս գալը չի կարելի տուն մտնել: Մայրը սովորաբար դուրս է գալիս և աղջկայ գլխին շաղ է տալիս բրնձախառն մանր փող: Դորանից յիտոյ էլ դեռ տուն չեն մտնում, այլ հարսնացուին նստեցնում են բակի մէջտեղը մի աթոռի վերայ և ընկեր-աղջիկները ձեռք ձեռքի տուած պար են բռնում նորա չորս կողմը և կոլորպարի

պէս պարելով, իետ ու առաջ են գնում: Հարս-բաղնքի երեկոյից արդէն հարսանիքը նստած կամ սկսուած է համարուում, որ զիւղերում շարունակուում է երեք օր, իսկ քաղաքում միայն մէկ օր:

Քաղաքում պսակի հանդէսը կատարուում է և՝ առաւօտեան և՝ երեկոյեան, իսկ զիւղերում միայն առաւօտեան: Քաղաքում առհասարակ տպադրուած հրաւիրատոմսակներ են ուղարկում, որոնց մէջ լարտնելով, թէ այս ինչ եկեղեցում և այս ինչ ժամին պէտք է կատարուի այս ինչ երիտասարդի ու օրիորդի պսակադրութեան հանդէսը, խնդրում են, որ այս ինչ ոքն իւր ներկայութեամբ պատուէ այդ հանդէսը, իսկ յետոյ բարեհաճի շնորհ բելի հարսանեաց խնջուքին, որ պէտք է լինի այս ինչ տանը: Եթէ պսակը կատարուում է առաւօտեան, հրաւիրեալ-ները նշանակուած ժամին հաւաքուում են եկեղեցին, ներկայ են գտնուում պսակի հանդիսին, շնորհաւորում են, համբուրուելով այր-մարդիկ թագաւորի հետ և կին-մարդիկ հարսի հետ, և ցրուում են իւրեանց տները, որովհետև բռն հարսանիքը, ալինքն պարահանդէսը ու հարսանեաց խնջուքը լինում են զիշերը: Այդ դէպքում փեսայի տունը դնում են միայն ամենամօտ աղջականները, որոնք և մնում են այնտեղ, ճաշում և ժամանակ անցկացնում նեղ շրջանում մինչև երեկոյ: Իսկ եթէ պսակը կատարուում է երեկոյեան, իսկոյն և եթ պսակից յետոյ ամենքը գնում են հարսանքատունը և սկսուում է խնջուքը և հարսանեաց ուրախութիւնը, որ շարունակուում է մինչև առաւօտ:

Պսակից առաջ կատարուում է «Հարսնառի» ծէսը, որ հարսանքի գլխաւոր արարողութիւններից մէկն է: Փեսայի կողմի հարսանքաւորները հաւաքուում են փեսայի տունը, քահանան օրհնում է փեսայի զգեստները և ըոլորեքեան գնում են կառքերով հարսի տունը «Հարսնառի»: Փեսային նորա կառքում նստած ուղեկցում են փեսադերները-«շաֆերները». Հարսի տանը քահանան օրհնում է պսակի զգեստները, և մինչև որ հարսը հագնուում է, խնամիները հիւրասիրուում են թէլով և թեթև ոգեպահիկով: Երբ որ հարսը հագնուում, պատրաս-

տուում է, փեսաղբերներն ու հարսնեղբարները գնում են, բերում նորան դահլիճ և կանդնեցնում փեսալի կողքին սեղանի մօտ, որի վերայ կարգով շարուած են լինում բոլոր մինչև հարսանքի օրը և նոյն իսկ հարսանքի օրը ստացուած բնծաները: Թէ փեսալի և թէ հարսի զգեստաւորուելու միջքում այժմ քաղաքում ոչ մի առանձին ծէս չի կատարուում, ոչ մի երդ չի երգուում, ինչպէս որ եղել է հնումը: Այժմ չի կատարուում և այն ծէսը, որ հին ժամանակներն անհրաժեշտ կերպով կատարուել է: Այժմ երբ հարս առնողները գալիս, բաղմում են և սկսում են յարգուել, այդ ևս մէկը չի շրջում առանձին սրուակով հիւրերի մէջ և հիւրերի թաշկենակի վերայ հոռաւէտ ջուր, կամ, ինչպէս սովորութիւն է եղել ասել, «ամբըէ» սրուակում:

Կէս պասակը կատարելուց և հարոի ու փեսալի ծոցը՝ նուրբ կտորի մէջ փաթաթած ու կարմիր ժապաւէնով պնդած մի մի փոքրիկ անուշի կտոր դնելուց յետոյ, հարս ու փեսալին նրստեցնում են մի ծածկուած շքեղ կառքի մէջ, որ հենց այդ նպատակի համար մասնաւորապէս վարձուած, կամ, ինչպէս յաճախ պատահում է, այս կամ այն հարստի տանից բերուած է լինում և որի ձիերի ականջներն ու բաշերը և կառապանի թևերն գոյնզգոյն մետաքսէ թաշկենակներով է կապսծ-զարդարած լինում, և բազմաթիւ կառքերով ուղեկցում են եկեղեցի: Հարս ու փեսալի կառքի առաջին նստարանի վերայ ուղիղ հարս ու փեսալի դէմ ու դէմ նստում են երկու տղալ, վառած կերոնները ձեռքներին բռնան, իսկ կառապանի կողքին առօք փառօք բազմում է «Իգիտ-Աղասին», որի թևերը և կուրծքը նոյնպէս զարդարուած է լինում գոյնզգոյն մետաքսէ թաշկենակներով: Գոյնզգոյն թաշկենակներով զարդարուած են լինում և բոլոր ուղեկցողների կառքերի ձիերի ականջներն ու բաշերը և կառապանների թևերը:

«Իգիտ-Աղասին», ինչպէս ցոյց է տալիս և բառի նշանակութիւնը, հին ժամանակներն եղել է հարսանքին մասնակցող բոլոր կտորիմների պարագլուխը, հարսանքի կառապարիչը և ընտրուում է եղել փեսալին մօտ ճարպիկ կտորիմների միջից:

Բայց այժմ այդ դերը կատարում է մի վարձուած սպասաւոր, որի պարտականութիւնն է սպասաւորութիւն անել հարս ու փեսալին հարսնառի և պսակի ժամանակ և տիրապէս հարսնեաց տան սարք ու կարգի վերալ նայել: Նա է հարս ու փեսալին կառք նատեցնում, նա է կառքի դուռը վակում, բաց անում, նա է պսակի ժամանակ հարս ու փեսալի վերնազգեստները հանում, հազցնում, նա է, վերջապէս, պահում և պոակի ժամանակ մատուցանում քահանալին այն արծաթեալ անօթը, որով զինի են խմացնում թաղաւորին և թագուհուն:

Նորապօակներին հարսանեաց տան դրան առաջ ընդունում և համբուրելով օրհնում ու շնորհաւորում է փեսալի մայրը զլխին քող ձգած: Այդ միջոցում էլ բրնձախառն փող են շաղ տալիս զլխներին, խունկ անում և մի զորգ՝ վզերին կարմիր ժապաւէններ կապած՝ սպիտակափետուր աղաւնի են արձակում: Տուն մտնելով, հարս ու փեսան կանգնում են դահլիճի մէջ տեղը, մատուցուում է մեծ մատուցարանով շամպանի բաժակները, իզիտ-Ծղասին լցնում է փրփրալից գինին, երաժշտութիւնը „տուշ“ է նուագում և բոլորեքեան շնորհաւորում են նորապսակներին: Հին ժամանակները փեսալի մայրը դրան առաջ նորապսակներին ընդունելու միջոցում նոցա բերանը մի մի կտօր անոյշ է դնելու եղել, իսկ շնորհաւորանքն եղել է „Ալկէլինի“ ձայնուկցութեամբ:

Բաժինքն ուղարկուում է փեսալի տունը կամ հարսանիւքից մի օր առաջ, կամ մի օր յետոր: Ըռաջները սովորութիւն է եղել բաժինքն ուղարկել հէնց նոյն իսկ հարունիքի օրը և հարսի շորենքնը դնելով մատուցարանի վերալ, շրջեցնել և ցոյց տալ հանդիսականներին հարսանեաց խնջուքի ժամանակի: Սովորութիւն է եղել և հարսի օժիտի ցուցակը կազմել և հանդիսաւոր կերպով կարդալ բոլոր հրաւիրեալների առաջ հարսնառի ժամանակ այս ձևով.

„Կամաւ կամեցողին բարեաց Տուն մերոյ Յսի Քսի  
և օրհնելոյն յաւիտեանս ամէն

Որ եղեւ այս շնորհաւորութեան հարսանեաց զիրս ՚ի տիրապահ և լածախնամ քղքս ՚ի ՚նոր ՚նախիջևան, ընդ հովանեաւ Արդին ՚նի-

կողայոսի Հայրապետին ոքանչելագործին, և ՚ի Հայրապետուեցն Եփրեմայ Արժանընտիր Սրբնար Կթուղիկոսին, և Առաջնորդին Նախիջևանայ և Բևարարիոյ Ծծարեալ Կալսորընտիր և կաւալերազարդ Հովուապետին Տն Ներսիսի Սրբազան Արք եպիսկոպոսին, և ՚ի Ժամանակս Թգուրին ամ ռուսաց Այենաբարեպաշտ և ինքնակալ մեծ կայսեր Նիկոլայ Պավլովիչի, ՚ի Թւոյն Փրկչին մերոյ ՚ի 1832 ամի և փետրվարի 8 ին, որ պղն Պապուկ Գրիգորեան Սուլթանշահովն էառ օրինաւոր սր ամուսնութք զնագելի դուստրն իւր Եղիսարէթն, վճռկն Աղայ Գարբիէլ Խոճայովին, նախ պարզեկ Ծծային օրհնութիւն և սրց մշտանուէր աղօթքն որ ի միասին Ած խորին ծերուի պարզեվեսցէ, նաև վերագոյնդ յիշեալ Աղայ Գարբիէլ Խոճայովն շնորհէ նազելի դատերոջն իւր զօժիտս ալսինքն կանացի ուկեղէն դարդս, ՚ի ներքոյ բայտնին և են ալսոքիկ:

Նախ մէկ լաւ անդամանդեալ ծաղիկ

1. լաւ բերգամ պաղի անդամանդեալ

1. ջուխտ օղ պուլեանտնի

1. ջուխտ ևս օղ անդամանդեալ

1. թէօքմէ խաֆէս մրգրտեալ 20 խաթէն, և 2 կղմն 30

Հատ ռուպլիէ ոսկով

1. ջուխտ ոսկեալ գօտի և մէջն էլմասեալ

1. ջուխտ ևս ոսկեալ գոտի

1. կըշտանոյ 40 եալտըզ ոսկիք և մէջն չորսնոյ ոսկի

1. լաւ մատանի էլմասեալ

1. պուլաւքի էլմասեալ

և այս ներքոյ երեք գարդս ՚ի լրօտամպոլից բերելոյ ապրովեալ է որք են ալսոքիկ.

1. լաւ կէրտանլըն անդամանդեալ

1. ջուխտ գոտի ևս անդամանդեալ

1. ջուխտ ապոճան այն ևս անդամանդեալ

և այլ ամ պղնձեղէն շորեղենն

ը նոսին ըստ կարգին:

Գիւղերում թագաւորին զգեստաւորելու ժամանակ նորաընկեր-կտրիմները գանազան կատակներ են անում և փող ըս-

տանում քաւորից: Նոքա ծուռ կամ ընդհակառակն են հագցնում նորա հալաւների զանազան մասերը և իւրաքանչյիւր անդամ հարցնում են. „Կնքահար, ինչն է եանխիշ վեսին վրան“:

Հարսին զղեստաւորելու ժամանակ կլոր ձևով կտրում են նորա „զիլֆինները“ — գանգուրները, որոնք բազմաթիւ բարակ հիւսերով ծածանուում են նորա ուսերի ու մէջքի վերայ, „փերշտմայ“ են անում, նորա ոսկիններով զարդարած ֆէսը, „փօշի“ են կապում զլխին, ամբացնում են փօշիի վերայից «փէրչամբաղին» ու „փէրչամբատին“, հազցնում են ոխումաշը, մէջքին կապում են մարգարտայեռ արծաթեայ. ճարմանդով կամարը՝ „խույանը“, մատերին դնում են մատանիները, ձեռքը ձգում են „ապունանը“-ապարանջանը, վղին ձըդում են ոսկի շարոցը և „գերդանլըխը“ և երեսին կարմիր քօղը:

Դիւղերում սպասիի գնում են սովորաբար ստքով. Հարսի մի ձեռքից բռնած է լինում վեսան, միւս ձեռքից կնքամալքը. Փեսաղբերներ և խաչեղբալրներ, կամ, ինչպէս քաղաքում կոչուում են, „շաֆերներ“ չ'կան, պսակի ժամանակ էլ թագաւորի և թագուկու զլխին թագ բռնելու սովորութիւն չ'կալ, ինչպէս քաղաքում:

Հարսի բաժինքը վեսայի տունն է ուղարկուում երկու անգամ-մի մասը կէս-պսակի միջոցում, միւսը նոյն իսկ հարսանեաց ժամանակ, երկրորդ օրը: Կէս-պսակին առաջ վեսայի տանից գալիս է մի ձիաւոր և տանում է միայն մի բարձ, լետոյ գալիս են վեսայի ծնողները և տանում են կողինքը, իսկ հարսանեաց օրն „աղջիկ-խնամինները“ տանում են Հարսի „սնդուկը“ թանկազին մանր իրեղէններով և „բոխչան“ հալաւներով:

Հարսի ծնողները պսակի արարողութեան ներկայ չեն զրտնուում, ինչպէս քաղաքում. նոքա սովորաբար գնում են վեսայի հարսանեաց երկրորդ օրը, շրջապատուած ազգական կանանցով ու տղամարդկանցով, որովհետեւ հարսանքի առաջին օրը տիրապէս պատկանում է երիտասարդներին և աղջիկներին և այդ

պատճառով էլ կոչուում է „կտրիմների-Հարսնիք“՝ իսկ երկրորդ օրը պատկանում է տղամարդկանց ու կանանց և այդ պատճառով էլ կոչուում է «էրիկմարդոց-Հարսնիք»։

Նորապսակ գոյգի ոտքերի տակ եկեղեցուց դուրս գալու ժամանակ դնում են մի աման, որ հարսն ու փեսան աշխատում են միմեանց առաջը տալ ու կոտրել, որովհետև ախտիսի Հասկացողութիւն կալ, թէ ով որ առաջինը կանխէ կոխել ու կոտրել ամանը, նա էլ տան մէջ դիմաւորապէս իշխողը, հրաժարողը կ'լինի: Փեսայի տունը մտնելու ժամանակ նորապսակների զլիին միշտ աղաւնիներ չեն արձակում, ինչպէս քաղաքում, այլ երբեմն և սպիտակ հաւեր: Հին ժամանակները սովորութիւն է եղել հարս ու փեսայի ոտքերի տակ և ոչխար մորթել, որ այժմ թէ քաղաքում և թէ զիւղերում իսպառ վերացել է. ինչպէս որ վերացել է արդէն և „խորդան տանելու“, այսինքն սպակուղների մօտ ազգականների իւրեանց հետ չ'հրաւիրուած մէկին հարսնիք տանելու սովորութիւնը։

Երիտասարդներն ու աղջիկները, որոնք հարսանքի տանը բոլոր ժամանակ շրջապատած են ինում հարս ու փեսային, զբաղեցնում ու դուարճացնում են նոցա, ՚ի միջի այլոց, աշխատում են և նորապսակների վերայից մի բան գողանալ, որ „տառօսը“ իրենց էլ լինի: Բացի այս բոլորից, զիւղերում մինչև ցայսօր զեռ պահպանուել է փեսային զգեստաւորելու, հարսնառ գնալու և պսակի երթալու միջոցում «պարեր» երգելու սովորութիւնը, որոնց բառերը և ոճերը ժողովրդի բերանում ներկայումս դժբաղդաբար ալնքան աղաւաղուել են, որ համարեա թէ անկարելի է դարձել վերականգնել նոցա իմաստը, հասկանալ նոցա բովանդակութիւնը։

Հարսնառ երթալու ժամանակ, երբ հասնում են հարսի տան դրան շեմքին, օրինակի համար, երգում են։

1. Կուսն ալ լուսացաւ, բարի արև ձեզի,  
Աքլորն ալ խօսեց իրեք բերան  
Եւ իւր հաւ տալով քայից հպարտ.  
Ես ան ճամբաներուն ճամբորդն եմ,  
Հատ կեշթ ամուսն կուգամ,

Ճատ կեշթամ ու կուղամ.  
Ճամբունդըրկու հատ վարդ անուշ  
Աւնէր իր ծոցին.

2. Մեր թագաւորին կապան կանանչ էր,  
Մեր թագաւորն իր թուխումներուն մէջ  
Մեր թագաւորն էր այ ևու պէս:  
Մեր թագաւորի ձիին զարդն էր  
Ճերմակ եալ հինայած.  
Մեր թագաւորի ձիի ոտքի նալերն էր  
Ոսկի, արծաթ գամերով.  
Մեր թագաւորի ձեռքին խաչ  
Ճինսեց ոսկերիչ ոսկեզօծ խաչ:

Հարսնառի այս „պարը“ միւս բոլոր „պարերի“ մէջ զեռ  
ամենալաւ պահ զանուածն է, որովհետեւ եթէ ոչ ամբողջովին,  
գոնէ, մասամբ կարելի է վերականգնել նորա ընդհանուր ի-  
մաստը: Միւս պարերը գլխովին աղաւաղուած են և նոցանից  
միանդամայն րան չի կարելի հասկանալ: Փեսային զգեստա-  
ւորելու ժամանակ, օրինակի համար, երգում են հետևեալը,  
որ աւելի բառակոյտ կարելի է կոչել, քան թէ երգ:

1. Այսօր ես նոր թագաւոր ես նոր  
Պարոն մունետիկ սէր հնագանդ մունետիկ  
Ամենը հնագանդ մունետիկ  
Եզ պատուէր զմեզ իւր դուռն.  
Եւ շար կուտար և կապեց շարը  
Երանական հայոց հայրապետը  
Սուրբ Լուսաւորիչ իւր անունով  
Եւ երեք խաչին անունով օրհնեց թագաւոր  
Որ է մեր նոր թագաւոր օրհնեց թագաւոր  
Որ զերկինս պահէր կուսայեալ կին  
Զոր կաչին հաւասարիչ բոլոր  
Զոր կաչին հաւասարիչ բոլոր
2. Մայրս Մարիամ, Սուրբ Աստուածամայր  
Ետ երեք խաչին անունով օրհնեց թագաւոր  
Որ մեր թագաւոր նոր օրհնեց թագաւոր  
Որ էր հարսն կոյս գովիճակ հաւասարեց բոլոր  
Նըշտակ երկնից անցնէր ու ասէր.

Թագաւոր նա հագեալ և դովեալ:  
Մունետիկը գովելով անցնէր ասելով,  
Թագաւոր նա հագեալ և գովեալ: <sup>1)</sup>

Քաղաքում նորապահների նարօտի կնիքը քանդում են, կամ, ինչպէս ասում են, թագը հանում են իսկոյն եկեղեցում, իսկ գիւղերում երկու-երեք օրից յետոյ: Պսակից յետոյ պատահած առաջին կիւրակին կոչուում է „Առջի կիրակի“: որ նոյնապէս տօնուում է: Այդ օրը գայիս են հարսի ծնողները և մօտ խնամիները, բերում են ընծաներ և մեծ խնջուք է տեղի ունենում: Առաջին կիւրակէից յետոյ նորագաւակներն իրաւունք են ստանում տանից դուրս զ'ալու և այցելութիւն անելու իւրեանց այն ազգականներին, ծանօթներին ու բարեկամներին, որոնց տները պէտք է երթան-գան: Ակսուում է «Հարս տուն բերելու» կարգը: Ազգականները հերթով «զիաֆէթ»-հրաւէրք են սարքում իւրեանց տնեւ ում և հրաւիրում են հարսին, կամ, ինչպէս ասում են, «Հարս տուն կ'բերին»:

Նախիճնակի հարսանեաց ուրախութիւնը, ըստ ամենալնի, նմանում է մեծ բէհի կամ հանդիսաւոր բէհի ուրախութեան: Նոյն երաժշտութիւնը, նոյն պարերը, խնամիների ընդունելու ու պատուելու նոյն կարգն ու «գառաթը»: Խնամիների հրաժեշտ տալու ժամանակ, երբ քէֆերը լաւ հասած է լինում, յաճախ նոցա երաժշտութեամբ են ճանապարհ ձըգում, և այդ միջոցում «իգիտ-Աղասին» գինով լի բաժակները տանում է խնամիների առաջից: Տեղ-տեղ կանգ են առնում, խմում են, պարում են և այդպէս շարունակում են, մինչև որ նոյն տուն են հասցնում: Առհասարակ նախիճնանում քէֆի և ուրախութեան չափաւորութիւն չ'կալ: նոքա իւրեանց խօսքերը, բէհերը, տօն-շնորհաւորները և զիաֆէթները կամ իսպառ առանց քէֆի, միայն թուղթ խաղալով են անցկացնում, կամ չափազանց գօր են տալիս օղիին ու փունջին և փողոցներն են ընկնում: Ճատ անդամ կարելի է պատահել փողոց-

<sup>1)</sup> Այս աղաւաղուած պարերից օրինակները մեզ հազարդել է պ. Միքայէլ Հուգարեանը:

ներում քէֆ անողների. նոքա կամ լուռ ու մունջ գնում են փողոցով երաժշտութիւնն առաջները ձգած, կամ հարալ-հրոց են բարձրացնում, ծափ տալիս ու պարում, կամ արշաւում են կառ քերով կողքերին նստացրած գուռնաշխներին:

Նախիջևանցոց զործածած երաժշտութիւնն եւրոպական նուագախումբ և հայկական դար ու գուռնան է, որ Նախիջևանցիք կոչում են «դառւլ-գուռնա»: Առաջինը գլխաւորապէս գործ են ածում հարուստները, իսկ երկրորդը գիւղացիք և քաղաքի աղքատները: Սովորաբար հարուստներն էլ, երբ քէֆերը հասնում է, չեն բաւականանում միայն եւրոպական նուագախմբերով, այլ հրաւիրում են և գուռնայ, թէև տեղական նուագախումբն էլ, որ մասամբ բաղկացած է հայ երաժշտներից, գոնուում է հայ կառավարչի ղեկավարութեան ներքոյ, ազատ կերպով նուագում է տեղական ժողովրդի սիրած բոլոր եղանակները: Կան այնպիսի գուռնայ սիրողներ, որ ուշադրութիւն չ'դարձնելով այն ժողովրդական առածին, որ ասում է, թէ «Ճուռնալի ձայնը հեռուէն աղէկ կուգայ», հրամայում են գուռնաշխներին իւրեանց մօտ նոտել և իւրեանց ականջի մէջ փչել:

Նախիջևանի „Դառւլ-գուռնան“ բաղկացած է մի մեծ դարից և մի կամ երկու փոքրիկ բարձրաձայն, ճշացող ու շատ զիլ ձայն ունեցող գուռնալից: Այս վերջին ժամանակներս գլխաւորապէս գիւղերում փոքր գուռնալի վերայ աւելացել է և մի մեծ գուռնայ, որ կոչուում է „Բոռոզան“: Գիւղերում էլ, բացի դառւլ-գուռնալից, կայ և եւրոպական նուագախումբ, որ բաղկացած է միայն մի քանի նուսղարանից՝ դաիրէ, ջութակ-«քեմենչէ», կլարնետ և կոնտրբաս կամ «բուրոս»:

Պարում են սովորաբար և' տեղական և' եւրոպական պարերը: Փաղաքում տեղական պարերն արդէն վերջանալու վերայ են, նոյն իսկ զիւղերում հետղհետէ մտնում են և եւրոպական պարերը: Տեղական պարերը պարում են միջին արագութեամբ, հայկական և առհասարակ արևելեան պարերի սովորական «պալերն» անելով: Պարում են կամ առանձին-առանձին, կամ տղամարդ տղամարդու հիտ, կամ տղամարդ կին-մար-

դու հետ և կամ կինմարդ կինմարդու հետ, դիմաց-դէմ կանգ-նած, միմեանց հետևելով, միմեանց յարմարեցնելով իւրեանց շարժմունքը և միմեանց հետ իւրեանց կանգնած տեղերը փոփոխելով։ Պարերի սովորական տեսակներն են զանազան «Օլին-Հաւաները»։ Երաժշտական եղանակների մէջ կան, բացի «օյին-Հաւաներից» եղանակներից, և „Ղղար-Հաւան“, „Բոհ-դան-Հաւան“, «Պատին-տակը», «Ալկէլինը», մինչեւ իսկ «Չալձիի Հաւան», և այլն և այլն։

### ՏՂԱԲԵՐՔ ԵՒ ԿԱՌԻՆՔ.

Երրոր նախիջևանում մի կին լղանում է, սովորաբար առում են, թէ արս կինը ճանրահ է, և կամ «տղով է», իսկ երբոր կինը ծնում է, առում են, թէ արս տանը, կամ այս ինչ մարդուն և կամ այս ինչ կնոջը «աչքի լուս է եղել»։

Նախիջևանցիք, որոնք ամեն մի ընտանեկան ուրախառիթ և տիրառիթ երեւոյթի համար իրրեւ շնորհաւորանք, կամ միխթարանք ու ցաւակցութիւն ստեղծել են զանազան իմաստուն ոճեր ու դարձուածներ-«բարի Ահաթի ըլլալ», «բարի պըսակ առնուս», «պսակներովդ ծերանաք», «գալիք բարի», «դուռ շատ ապրիս», «մեծ օրդ շնաւոր», և այլն, տղաբերքը շնորհաւորելու համար էլ սովորաբար գործ են ածում «աչքի լուս» ոճը, որից անկատկած առաջ է եկել և այդ տղաբերք նշանակող «աչքի լուս լինել» դարձուածը։ Տղաբերքի մտքով կիրարկուած այդ ոճը, որ այժմ դրիծ է ածուում անդիտակցաբար, շատ հետաքրքրական է, որովհետեւ դա ցոյց է տալիս, թէ նիշպէս են նայել կին նախիջևանցիք գաւակաբերութեան վերայ. դա նոցա կարծիքով եղել է Աստուծոյ շնորհքը, ուրեմն և աչքի լուսի պէս սիրելու ու փարփակելու բան է եղել նոցա համար զաւակը, իրրեւ նախախնամութեան տուած պարգևը, իրրեւ ժառանդ, սերունդը շարունակող, իրրեւ տան, ծնողներին աջակից և, վերջապէս, իրրեւ օգնական, աշխատող որժ։

Բացի «աչքի լուս լինել» նախիջևանում ծնուելու, աշխարհ գալու մտքով կիրարկուում է և մի ընտիր ոճ-«ընծա-

լուել», որ սովորաբար զործ են ածում, երբ կամենում են արտադարտել մէկի արս ինչ տեղում, այս ինչ ժամանակ ծնուած լինելու իմաստը: Նախիջևանցին սովորաբար չի ասում, ես ծընուել եմ այս ինչ թուականին, կամ այս ինչ տեղում, այլ անպատճառ - «ես ընծայած եմ» այս ինչ տարին, կամ այս ինչ զիւղն ու քաղաքը: Ֆննդկանը կոչուում է «տղոցկան», իսկ տղոցկանին աղատողը կամ, ինչպէս Նախիջևանցիք ասում են, «տղայ ու նողը» կոչուում է «Քայեկ», որ, ինչպէս ամեն տեղ, արտեղ էլ լինում են պառաւ կանայք, ուստի և կոչուում են դայեկ-մաներ, այսինքն «Քայեկ-մամաներ»: Քայեկները ներկա-լում մնացել են միայն զիւղերում, իսկ քաղաքում նոքա արդէն վերացել կամ վերանալու վերայ են. նոցա փոխանակել են մասնագիտական կրթութիւն ստացած մանկարարձ կանայք կամ աղջիկներ:

Բացի դայեկներից, տղոցկանին նայելու, նորա մօտ նստելու, մաքրութեան վերայ հսկելու համար Նախիջևանում կան և առանձին պառաւ կանայք: Թոքա „Գող-անաներ“ են, որոնք չափաւոր վարձով միշտ հրաւիրուում են ծննդականի տունը և չար աչքից աղատում և սոհասարակ լսնամում են թէ տղոցկանին և թէ նորանին, զոնէ առուջին ժամանակները:

Նախիջևանում ծննդկանը համարեա թէ երբէք լիակատար կերպով քառասունք չի պահում. քաղաքում սովորաբար պահում են 22 կամ ամենաշատը 30 օր, որից յետոյ կամ ինքըն ծննդականն է գնում եկեղեցի փարատուում, կամ ինչպէս ասում են, «քառսունքուում», կամ քահանան է տուն դալիս, փարատում: Դիւզերում ծննդկանն աւելի շուտ է վեր կենում տեղից, աւելի շուտ է քառասունքուում և դուրս դալիս տանից, որովհետեւ, ինչպէս ամեն հայաբնակ տեղ, Նախիջևանի զիւղերում էլ բոլոր տնային տնտեսութիւնը ծանրանում է կնոջ վերայ և չի կարելի երկար ժամանակ նորան երեսի վերայ թունել:

Երկունքի դժուարութեան դէպքերում Նախիջևանի պառաւները զանազան միջոցների են դիմում. նոքա ծննդական ցաւով բռնուածի սենեակում բոլոր փակուած, զոց տեղերը բաց

են անում — դռները, պահարանները, գղրոցները, որպէս զի հեշտութեամբ բացուի, ազատուի և ծանրածը: Նոքա եկեղեցիների — Ա. Գէորգի ու Ս. Նիկողայոսի „Թոփուզներն“ են բերել տալիս և դնում տղոցկանի վերալ, „Ճէնկի թուր“ են ջրում ողողում և ջուրը տալիս խմելու, և այն և այլն:

Նորածին մանուկներին աղելն ախտեղ էլ անխտիր կերպով պահպանուել է, իրեւ առողջարար և հայկական հնաւանդ սովորութիւն. բայց երեխաններին՝օրօրոցում կապկանու սովորութիւննը, որ ընդունուած է Հայաստանում ամեն տեղ, արտեղ քաղաքում արգէն խսպառ վերացել է, գիւղերումն էլ վերանալու վերալ է:

Երեխայի մկրտութիւնը կամ կնունքն այս կողմերում որոշեալ ժամանակ չունի. նա կատարուում է կամ 2—3 օրից յետոյ, կամ աւելի ուշ, նայելով հանգամանքին: Գիւղերում կնունքի կարգը միայն բացառիկ դէպքերում է տանը կատարուում, իսկ քաղաքում այդ դատապարտելի՛ սովորութիւնն աւելի յաճախ է տեղի ունենում և շարժական աւազան գործածելու սովորութիւնը գնալով տարածուում ու ընդհանրանում է: Այդ, ինչպէս և մեր եկեղեցական ծէսերի ու կարգերի զեղծումներից շատերը, պէտք է վերագրել մեր քահանաների անհոգութեան և նոցա ձգուման հաճոյանալու իւրեանց հարուստ ծխականներին, որոնց, ՚իհարկէ, շատ էլ հաճելի չէ իւրեանց բամբակում պահած ու պահելիք „աչքի լուսին“ շատ անդամցուրտ ու անախորժ եղանակներին քաղաքի հեռաւոր տեղենից ու անկիւններից իւրեանց ծխական եկեղեցին տանելու մկրտելու համար: Կնքահոր իւր սանամօրը և սանին տարած սովորական ընծաներին միշտ դարձ է տրուում մի որ և է արծաթեղէն և սառը-շաքար, կամ, ինչպէս ՚նախիջևանցիք ասում են, „նէրէդ-շաքար“:

՚նախիջևանի քահանաները մանուկներին սովորաբար տալիս կամ դնում են օրացոյցի մէջ զտնուած զանազան սրբերի և սրբուհիների անուններ, նայելով, թէ ինչ օր է ծնուել մանուկը և այդ օրն օրացոյցով ո՞ր սրբի կամ սրբուհու տօն է կատարում եկեղեցին: Այդ է պատճառը, որ ՚նախիջևանում

ազգային անունները համարեած թէ չկան, իսկ դորա փոխարէն կան բազմաթիւ Սարդիսներ, Յովհաննէսներ, Կարապետներ, Մկրտչներ, Գրիգորներ, Գէորգներ, Մարկոսներ, Ղուկասներ, և Քրիստինէ, Նեկտարինէ, Ավելինէ, Հերմոնէ, Եփրոսինէ և ուրիշ արտվիսի հայի ականջին խորթ անուններ:

Կնունքը տուն է բերուում լուռ ու մունջ. սկսում են միայն երգել, երբ համուում են ծննդկանի տանը: Հին ժամանակիների եկեղեցուց մինչև տուն շարական ասելը և զանգականեր հնչեցնելով կնունքը տուն բերելը ներկայումս քաղաքում խսպառ վերացել է և մնացել է միայն գիւղերում, այն էլ ոչ ամեն տեղ: Մինչև ցարօր դեռ կարելի է տեսնել կնունքի արդ զանգակները մեր եկեղեցու միւր նուազարանի-ծննդղաների հետ նախիջևանի եկեղեցիներից մի քանիսի պահարաններում պահուած եկեղեցական ուրիշ անդրծածելի իրեղէնների հետ միասին:

Մկրտութեան խնջոյքի սեղանի վերայ անպատճառ դըրուում է աւանդական ձուածեղը, որ ուտելուց յետու. հրատիրեալներից իւրաքանչիւրն իւր համար անհրաժեշտ պարտականութիւն է համարում փող ձղելու ձուածեղի սկուտեղի մօտ յատկապէս այդ նպատակի համար դրուած պնակի մէջ, որից հին ժամանակները հատուցուել է դայեկի կամ մանկաբարձի աշխատութեան վարձը: Ներկայումս դորսնից հաւաքուած ամբողջ դումարը դարձեալ պատկանում է դայեկին, բայց դա համարուում է ոչ նորա աշխատութեան վարձը, այլ երբեւ վերադիր ընծալ, որովհետեւ նա իւր աշխատութեան վարձը դարձեալ ստանում է կնունքի տիրոջից:

### ՄԱՀ ԵՒ ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

Երբոր նախիջևանում մէկը մեռնում է, սովորաբար ասում են, թէ այս ինչ մարդը «Պուն շատ ապրիս է եղել», մի ոճ, որ առաջ է եկել այն հանգամանքից, որ հանգուցեալի տիրոջը միիթարելու համար, առհասարակ ասում են.

«Դուն շատ ապրիս», ուրեմն և կազմուել է ճիշտ այնպէս, ինչպէս «Աչքի լուս է եղել» ոճը:

Քաղաքում շատ հեշտութեամբ կարելի է իմանալ, թէ ով է մեռնողը-այր-մարդ, թէ կին-մարդ, որովհետեւ, նախ, եթէ ոչ բոլոր մեռնողների, գոնէ, շատ շատերի համար սովորաբար քաշուում է մայր-եկեղեցու զոյդ-զանդակը, երկրորդը, այր-մարդու համար սուած քաշուում է մեծ զանդակը, յետոյ փոքրը, կին-մարդու համար-ընդհակառակը:

Մեռեալն իոկոյն եկեղեցի չի տարուում, ինչպէս շատ տեղիր, այլ բոլոր ժամանակ, որ տեսում է 2-3 օր, պահուում է տանը և միայն թաղման կարդը կատարելու համար տարուում է եկեղեցի, որտեղից ուղղակի յուղարկաւորում է հանգստարանը: Խոկ եթէ այնպէս է պատահում, որ տանը պահելու յարմարութիւն չի լինում, սովորաբար մեռեալը տարուում է հանգստարանի եկեղեցին և այնտեղ մնում է որոշեալ ժամանակը, որովհետեւ միւս եկեղեցիներում հանգուցեալ դնել-պահելը գեղեցիկ կարգադրութեամբ խստիւ արդելուած է:

Ամբիծը կամ, ինչպէս նախիջւանցիք ասում են, „համբիծը“ անխախտ կերպով շարունակուում է մեռնելու օրից մինչև կիւրակնամուտը-«կիւրամուտքը» ամեն երեկոյ առաջ մեռեալի վերայ, քանի որ նա թաղուած չի, յեռոյ մեռեալի տանը: Մեռեալի վերայ հին հայկական սովորութեամբ սաստիկ լացուկոծ անելն այստեղ էլ պահպանուել է, միայն վերջացել է երգախառն ողբասացութիւնը, որ այնքան տարածուած է Հայաստանում և ուրիշ հայաբնակ տեղերում: Սուդ անելու համար, քանի որ մեռեալը տանն է, դագաղի մօտ դրուում են ալթուներ ու նօտարաններ, որ շարքով և հանգուցեալին ազգակցական մերձաւորութեան կարդով բռնում են կանալք: Հանգուցեալի ամեն մի մօտ ծանօթի ու բարեկամի գալու միջոցին սգուորները նորոգում են իւրեանց սուգը, բարձրացնելով ձախները, ձեռքերը խփելով դագաղի սեղանին և հրաւիրելով նորեկին ականատես լինելու իւրեանց և իւրեանց բարեկամի անբախտութեան: Խոկ երկուորների թիւը խիստ շատ է լինում, որովհետեւ հանգուցեալի համարեան թէ բոլոր ազգականները,

ծանօթներն ու բարեկամները, հայկական հնաւանդ գեղեցիկ սովորութեամբ, իւրեանց սեպուհ պարտականութիւնն են համարում լինել մեռելի տանը, ներկայ գտնուել ամբիծներին, ոիրտ տալ, մխիթարել հանգուցեալի մերձաւորներին, որ, չըգիտենք բնչու համար, կոչուում է «կարամուտ տալ»:

Սուզը շարունակուում է և եկեղեցում ու գերեզմանատանը թաղման կարգը կատարելու ժամանակ, որովհետեւ այս կողմերում կանայք էլ բազարկաւորում են հանգուցեալին և ներկայ գտնուում թաղման տխուր հանդիսին: Եկեղեցում էլ հանգուցեալի կարգը կատարելու ժամանակ ամենամօտ ազգականների համար դադաղի մօտ մի առանձին նստարան է դրուում և որդուոր կանայք ոտից ցգլուխ սևաւորուուծ բազմում են սոյդ նստարանի վերալ, անդադար լաց լինելով, հառաչելով և յաճախակի խանգարելով ժամառացութիւնը:

Յուզարկաւորութիւնը կատարուում է հայկական յուզարկաւորութիւններին յատուկ շքեղութեամբ ու փառաւորութեսմբ, նայելով հանգուցեալի հասարակական դրութեան և նիւթական կարողութեան: Հարուստները համարեա թէ միշտ վարձում են շքեղ դիակառքեր թաղման պրոցեսսիոններին յատուկ բոլոր պարագաներով՝ ձիաւոր և հետևակ յուզարկաւորողներով, լուցեալ զամբարներով, պսակատարներով և նուագաճուներով:

Յուզարկաւորութեան ժամանակ ամեն ոք ճանապարհի վերայ գտնուած տներում պէտք է ոտքի կանգնի, մինչև իսկ մանուկների օրօրոցները պէտք է բարձր տեղ դրուեն, որովհետեւ կարող են «մեռելկոխ» լինել: Մեռելկոխ կարող են լինել և նոքա, որոնք շատ լաց են լինում մեռեալի վերալ, ուստի և նոցա հանգստացնելու, մեռեալից հովացնելու և այդպիսով մեռելկոխ լինելուց էլ ազատելու համար, պէտք է գերեզմանի հողից մի բուռն ածել նոցա կռնակն օձիքի տակից:

Հանգուցեալների թաղման կարգը կատարելու ժամանակ «գանձ» ասելու սովորութիւնն ալստեղ էլ կայ. սովորաբար ասում են „Յոյս իմ” գանձը, այն էլ, ’ի հարկէ, դիսաւորապէս հարուստների վերալ:

„Արդը“ միշտ կատարուում է թաղման կարգի հետ միասին, իսկ „եօթն“-ն երբեմն միասին, երբեմն էլ, և աւելի յաճախ, առանձին։ Միասին կատարելու գէպքում կարգը կատարող քահանան միշտ այդ մասին յախնում է հանգուցեալի տիրոջ, ասելով։ „Կիրամուտքն ալ եղաւ“։

Թաղումն առանց հոգեհացի կամ մեռելահացի չի լինում։ Նախապէս գերեզմանի վերայ քաղաքում բաժանուում է մի մի կտոր «տորթ» և մի մի գաւաթ օղի, յետոյ ամենքը հրամլուում են մեռելատունը հոգեհացի։ որից յետոյ ամեն մէկին տրուում է մի մի գաթայ, որ իւրեանց հետ տուն են տանում։ Թաղման գաթան, որ մի միջին մեծութեամբ հաստ կլորակ ուռուցիկ հաց է, պատրաստուում է մաստակախառն խմորից և խորոխից։ Եօթն և քառասունքը կատարուում են սովորաբար մանաւոր կերպով, իսկ տարիին դարձեալ ընդհանուր կերպով, ինչպէս թաղման հոգեհացը։ Բացի սովորական գերեզմանօրհնէներից, ունեոր մարզիկ սովորութիւն ունին տարին մի անգամ պատարագ անել տալու իւրեանց մեռեալների հոգուն, և այդ առթիւ հաց են տալիս աղքատներին։ Այդ տեսակ պատարագները կրչուում են՝ „ժամ պատարագ“։

Նախիջևանցիք էլ միւս Հայերի պէս սիրում են շքեղ շիրեմներ կանգնեցնել իւրեանց ննջեցեալների վերայ և զանագան սրտառուչ արձակ և սուանաւոր տապանագրեր փորագրել տալ նոցա վերայ, անպատճառ երկու լիզուով-հայերէն և ռուսերէն։ Պատահում են և աշխարհաբ սու տապանագրեր։ Զուրկ չէ հետաքրքրութիւնից հետեւեալ աշխարհաբառ տապանագիրը, որ մենք արտադրում ենք Ս. Նիկողայոսի հանգուտարանի գերեզմաններից մէկի վերայից։

Երբեմն մարդ էի ես ձեզի պէս,

Սյժըմըս եղայ ես հողի պէս.

Ես չի պիտ ըլլամ ձեզի պէս,

Դուք պիտի ըլլաք ինձի պէս։